

ՆԵՐՍԱԿԱՆ Վ-Ի ՄԱՀԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԸԹԹԻՒ

Պատմական ակնարկ

Ներսէս Վ-ի կենսագրութեան համար, մեր համոզմամբ, մի կարևոր գիւտ պիտի համարել Սարդիս արք-եպիսկոպոսի 1857 թ. փետր. 28 թուակիր նամակը Խալիպեանին, որ լոյս է տեսել պատուական կումայի մէջ պ. Եր. Շահազիզի ծանօթութեամբ, Այս նամակը, որպէս պատմական վաւերագիր, ըստ ամենայնի արժանի է խորին ուշադրութեան, որովհետև վերաբերում է պատմական այն ցաւալի եղելութեան, որ իւր ժամանակին այնքան յուղել է հասարակաց միտքը-Ներսէս Վ-ի մահուան պատմութեան, Մեր գրականութեան մէջ այդ նամակը առաջին գրաւոր յիշատակարան է, որի մէջ պարզ ու որոշ կերպով նկարագրուած է մեծանուն կաթուղիկոսի կեանքի վերջին բոպէսները և մահը: Ինչպէս յայտնի է, Ներսէս Վ-ի մահուան մասին կասկածողներ եղան, թէ բնական է, և շատ-կոսէ-ների բերնից բերան ընկնելով, համբաւ տարածուեցաւ, թէ Ներսէս Վ-ը թունաւորուած է: Այդ կասկածը, որ ոչինչ բանաւոր հիմք չունէր, այնքան խոր արմատ գցեց, որ այսօր էլ մնում է մի մշուշապատ ինդիր ոչ միայն ուամիկ հասարակութեան, այլ և տարաբաղդաբար, մեր գրականութեան լրջամիտ աշխատաւորների համար, որոնց մտաւոր հայեցողութեան առաջ, մեր խորին համոզմամբ, ինդիր մշուշը արդէն բոլորովին փարատուած պիտի լինէր:

Այսպէս մտածելու տեղիք տուեց մեզ պ. Ե. Շահազիզը՝ ծանօթանալով նրա հայեցքի հետ, որ նա արտայայտել է իւր կցորդած ծանօթութեան մէջ Ներսէս Վ-ի խնդրի մասին: Մեզ խիստ օտարութիւն թուաց պ. Ե. Շահազիզի նման մի յարգելի բանագէտ ու բանասէր գրագէտից լսել, թէ նա մեր հասարակութեան մէջ այնքան տարածուած թունաւորութեան զրոյցին դժուարանում է հաւատ ընծայել: Նրա համար Ներսէսի մահուան խնդրիը մշուշով պատած մի խնդիր է: Նրա հայեցքով

պէտք է «աւելի որոշ գրաւոր յիշատակարան», որ այդ խընդիրը պարզուի:

Կցանկայինք իմանալ, թէ ի՞նչ տեսակ գրաւոր յիշատակարան պիտի լինի, որ աւելի որոշ լինէր, քան թէ Զալալեանի վերոյիշեալ նամակը: Մի որևէ է պատմական անցքի ստոյդ եղելութիւնը իմացւում է ժամանակայների հաղորդած տեղեկութիւնով, որոնց անաշառութիւնը, անկեղծութիւնը անտարակուսելի են: Այդ մարդիկ երկու կարգի են լինում: Առաջին կարգին պատկանում են նրանք, որոնք իրենց ժամանակի պատմական անցքերի մասին թողնում են գրաւոր յիշատակարան, որպէս ականատես վկայ: Երկրորդ կարգին պատկանում են նրանք, որոնք թէև ժամանակակից են եղած պատմական անցքին, բայց եղելութեամ ականատես չեն եղել, և ինչ որ գրել են,—գրել են ուրիշից լսածը: Ներսէսի կեանքի վերջին բապէների և մահուան միայնակ ականատեսը, որ կարող էր այս մասին գրաւոր որոշ յիշատակարան թողնել՝ Զալալեանն էր, մեծանուն կաթուղիկոսի ամենամօտիկ ու մտերիմ մարդը, որ և արդարք թողել է մեզ վերոյիշեալ նամակի մէջ, որ զնորհիւ պ. Եր, Շահազիղին, կոբատից ազատուելով, այսօր մեր գրականութեան սեփհականութիւն է դարձած: Կասկած չկայ, որ այս մասին Զալալեանը միմիայն Խալիպեանին գրած չէ, այլ և իւր ուրիշ բարեկամներին, որոնց հետ գրագրութիւն ունէր: Բայց ուժ էլ գրած լինէր՝ բոլորի մէջ էլ անտարակոյս դէպքի եղելութիւնը պատմած կը լինէր այնպէս, ինչպէս պատմած է Խալիպեանին: Ի հարկէ հետաքրքրական է գտնել ներսէս Վ-ի մահուան առթիւ Զալալեանի գրած ուրիշ նամակները: Բայց դա կը լինէր լոկ հետաքրքրութիւն: Որքան էլ շատ լինէին՝ այդ նամակների վրայ հիմունելով, չէր կարելի ճիշա դատողութիւն անել՝ քննութեան առնուած խնդիրը: Այդ կէտում մենք համաձայն ենք պ. Ե. Շահազիղի հետ, քանի որ թունաւորութեան մասին ամբաստանուողը Զալալեանն էր:

Մնում են ժամանակակիցների ցուցմունքը, եթէ արդարն նրանցից ներսէս Վ-ի մահուան մասին մի որեկցէ գրաւոր բան մնացած է. օր. նամակներ, որ իմ կարծիքով շատ շատ են գրուած: Եթէ յաջողուի մեզ գտնել այդ տեսակ գրաւոր յիշատակարաններ, կտեսնենք նրանց մէջ երկու տեսակ իրարու հակառակ ցուցմունք ներսէսի մահուան մասին, որովհետեւ նրանք, որոնք հետաքրքրուում էին այդ խնդրով՝ բաժանուած էին երկու հակառակ բանակի, գիրսասականների և հակագիր-

սասականների¹⁾: Գիրսասականները կպատմէին եղելութեան մասին, ինչպէս Զալալեանը նկարագրել է Խալիպեանին գրած նամակում: Իսկ հակագիրսասականները այնպէս՝ ինչպէս գրականութեան մէջ արձագանք էր տուել: Այս մասին ես ամեններն կսակած չունիմ: Կարծել՝ թէ կարող են գտնուել յիշատակարաններ՝ գրուած անկողմնապահ և աննախանձ անձերից՝ ունայն ակնկալութիւն է: Այն ժամանակի ամեն մի մարդ, որ հետաքրքրում էր և զբաղում էր հասարակական կարևորութիւն ունեցող խնդիրներով և իրողութիւններով, ինչպէս նկատել հնք, կամ օրսկուրանտ գիրսասական էր, կամ լուսաւորեալ ազգասէր՝ հակագիրսասական: Այդ երկու կուսակցութիւններից գուրս երրորդը չկար, երրորդը յետոյ գոյացաւ. բայց նկատի առնելած խնդրի մասին սա էլ համակարծիք էր չիւսիսափայլականների հետ: Մեր ասածներից հետևեցնում ենք, որ հակագիրսասականներից մնացած յիշատակարաններն էլ որքան էլ որոշ լինէին, նոյնպէս խնդրի մշուշը չեն կարող փարատել: Գուցէ պ. Յ. Շահազիղը մեզ նկատէ, թէ մենք սխալում ենք, թէ մեր առարկութիւնը ենթադրութիւն է, և թէ կարող էին անյայտութեան մէջ շատերը լինել որք ոչ երկրպագեցին Բահաղուա: Բայց մի՞թէ մինչէ աւելի որոշ յիշատակարան երևալը՝ Զալալեանի նման մի բարձրաստիճան եկեղեցական, որ այնքան երախտիք ունի արած իր ազգին և եկեղեցուն, պիտի մնայ այն ծանր ամբաստանութեան տակ, որ հակառակորդները բարդեցին նրա վրայ:

Բարեբաղուաբար պատմութիւնը թողել է մեզ՝ միքանի փաստեր, որոնք կարող են հաստատ ապացոյց լինել, թէ Զալալեանի վրայ գրուած մեղաղրանքը չարաչար զրպարտութիւն էր: Այս տեսակ համոզման եկայ ի հարկէ ոչ այն ժամանակ, երբ խնդիրը յուզում էր, այլ յետոյ, երբ հասունացայ մտքով և պատուելով նախապաշարմունքներից, կարող էի իրերի ու իրողութիւնների վրայ sine ira, studio դատողութիւն տալ: Մեր ակնարկած փաստերի հետ ծանօթանալու և նրանց նշանակութիւնը ներսէս Վ-ի մահուան խնդրի վերաբերմամբ ըմբռնելու համար անհրաժեշտ է մի յետաղարձ ակնարկ ձգել անցեալ դարի մեր պատմութեան այն շրջանի վրայ, երբ թունաւորութեան համբաւը ելաւ և ապա գրականութեան մէջ արձանաշգրուեցաւ, որպէս ստոյգ իրողութիւն: Ես այդ ժամանակին ներսիսեան դպրանոցում գիշերօթիկ աշակերտ էի, թէև պատա-

¹⁾ Օրսկուրանաների և լուսատրեալ ազդասէրների:

նի, բայց բաւականին հմուտ, թէ ի՞նչ է լինում կեանքի ու գը-
րականութեան մէջ, և հետաքրքրում էի այն խնդիրներով, ո-
րոնք ունենալով հասարակական կարևորութիւն, դրազեցնում էին
ժամանակակիցների միաքը: Աւելորդ է ասել, որ մեղ համար
«Հիւսիսափայլ»-ը աւետարան էր, և Ս. Նազարեանցը ու Մ.
Նալբանդեանը՝ մեր մտածմոնքների վրայ անսահման տիրող
իշխանը: Ուրեմն ինչ որ ասելու եմ, ասելու եմ ոչ ի լուր
զարդուցեալ և ի կարծ ընդուստուցեալ», այլ ինչ որ տեսել եմ.
և որի ճշմարտութեանը կարելի է ստուգել:

Ի՞նչպէս ծագեց Ներսէս Վ-ի մահուան խնդիրը՝ գրակա-
նութիւնը արձանագրած է: Ես չգիտեմ, թէ ի՞նչ էին խօսում
ասաէ կոսէճները այս մասին: Նոյնպէս չեմ յիշում, թէ ի՞նչ
կարծիք ունէինք մենք, աշակերտներս: Մեր նախորդները,
որոնք ժամանակակից էին Ներսէս Վ-ի մահուան, և որոնք
ցրուեցան 1859 թ., երբ Դայթմազեանցը թողեց Ն. դպրոցի
տեսչի պաշտօնը և հեռացաւ՝ Դէորդ Աթիբէգեանցի-Կուսիկեան-
ցի խումբը՝ մի աւանդութիւն չթողին մեզ: Հաւանական եմ
համարում, որ ծագած կասկածը և կարծիքը նրանց չէր վրդո-
վիլ, որովհետև նրանք միշտ խորին յարգանքով էին վերաբե-
րում դէպի Զալալեանը և եռանդով ուսումնասիրում էին «Սար-
գիս Շնորհալին», որ Սարգիս եպիսկոպոսի սիրած հեղինակն
էր: Մի խօսքով ծագած խնդրի վերաբերմամբ՝ մենք անգէտ
էինք կամ անտարեր: Մեր աշքերը բացուեցաւ և իմացանք,
թէ ի՞նչ սարսափելի ոճիր է գործուել, երբ մեր ձեռքն ընկաւ
«Հիւսիսափայլ»-ի այն ամսատետրը, որի մէջ տպուած էր (Մ.
Նալբանդեանցի) կոմս Էմմանուէլի յայտնի յիշատակարանը:
Մեր գլխին կարծիս մի սումբ պայթեց, երբ կարգացինք նրա
մէջ՝ Դերսաս է այս Բրամինապետի անունը, մօրն անունը
յայտնի է, հօրն անունը չկայ մեր գրքերի մէջ..... թա-
թաւեց իր ձեռները ծերունու արեան մէջ: (Հիւսիսափ.
1859. որ ամսատետրում—չեմ յիշում): Աւելորդ է ասել, որ
մենք իսկոյն իմացանք, թէ ով է այդ բրամինապետը: Սըրա-
նից յետոյ երկար ժամանակ, մինչդեռ գտնուում էի հակագիր-
սասական կուսակցութեան ազդեցութեան տակ և անկարող էի
առողջ դատողութիւն տալ ժամանակի դէպքերի ու իրողու-
թիւնների իսկական նշանակութեան մասին,—ինձ համար ան-
դրդուելի համոզմունք էր, թէ Ներսէս Վ-ը թունաւորութիւնից
մեռած է: Համոզմանս հաստատութիւն դարձաւ, երբ ծանօթա-
ցայ Ստ. Պերճ Փափազեանցի յօրինած առզային պատմութեան
համառօտ ձեռնարկից հետ, որի մէջ պարզ որոշ կերպով ար-

ձանագրուած էր, թէ Զալալեանը թունաւորել է Ներսէսին և Ձեւնարկը տպագրած էր Կ. Պոլսում, 1860 թ.

Կարելի է երևակայել, թէ ինչ տպաւորութիւն գործած է Կոմս-էմմանուէլի յիշատակարանը լուսաւորուած ազգասէրների շրջանում։ Դրանք արամադրուած էին Զալալեանի դէմ բոլորովին ուրիշ պատճառով։ Բայց թունաւորութեան մասին տարածուած խօսքերին շատերը թերահաւատութեամբ էին վերաբերուում։ բայց Մ. Նալբանդեանի մերկացումից յետոյ, այլ ևս թերահաւատութեան տեղիք չէր կարող լինէր։ Ամենքի համար պարզ եղաւ, որ Զալալեանի մասին պատճած կարծիքը ճշմարիտ է։ Այս համբաւը միացրեց Զալալեանի հակառակորդներին, որոնք «հակագիրսասական» կոչուեցան։ Սրանց ժողովատեղին Հ. Էսֆիէճեանի ծխախոտի մաղաղինն էր, Արծրունու գալերէում։ Ահաւասիկ ստոյգ պատմութիւնը, թէ հրտեղից ծագեց և հրտեղից տարածուեցաւ Ներսէս Վ-ի թունաւորման համբաւը։ որ ինչպէս նկատեցինք, շուտով ազգային պատմութեան ձեռնարկի մէջ արձանագրուեց որպէս ստոյգ իրողութիւն։

Հետաքրքրական է իմանալ, թէ ինչպէս էր վերաբերուում հասարակ ժողովուրդը այս համբաւին։ Իմ այսօրուայ համոզմամբ, նրան ամեններն դղրդած չպիտի լինէր այս համբաւը, չը նայելով, որ հակագիրսասականները այս մասին ռամիկ ժողովրդի խաւերում յաջող պրոպագանդա անհերու համար ունէին մի այնպիսի յարմար մարդ, ինչպէս Գորեցի Անդրէսս վարդապետն էր, որ յետոյ, Ներ. դպրոցի նոր հոգաբարձութեան օրերին մեծ ժողովրդականութիւն ստացաւ, որպէս Թելեթի վանահայր։ և որպէս ազգայնութեան գաղափար տարածող վիրախօս հայերի մէջ, Հայոսեան ազգանունով։ Ես իմ կեանքում հանդիպած չեմ մի հակագիրսասականի, որ այնքան կոյր հաւատ ընծայած լինէր թունաւորութեան մասին ելած համբաւին, ինչպէս Հայոսեան Անդրէսս վարդապետն էր։ Որ այս համբաւը հասարակ ժողովրդի միտքը շփոթած չէ, — ապացոյց համարում եմ այն փաստը, որ Զալալեանը իր մեծ ձեռնարկութիւնը-Թիֆլիսի վանքի վերաշնութիւնը սկսեց և աւարտեց հէնց այն միջոցին, երբ թունաւորութեան համբաւը ամեն տեղ տարածում էր և մտքերը պաստիկ յուղում։ Իսկ ինչպէս յայտնի է, Զալալեանն այդ մեծ գործը սկսած և աւարտած, յուսալով վերև Աստուծոյ, Ներքեսում ժողովրդի օգնութեան վրայ։ Բոլոր շինութեան վերայ, ինչպէս աչքովս տեսել եմ, աշխատել է Թիֆլիսի համբաւը։ Անկարելի է ենթագրել, որ համբաւի մարդիկ յօժարութեամբ կլնունէին Զալալեանի ա-

ուաջարկութիւնը և այնքան եռանդով կաշխատէին այն՝ գործի վրայ, որ նրա, Զալալեանի անուան փառաւոր յիշատակը պիտի լինէր, եթէ նրա միտքն էլ գայթակղուած լինէր թունաւորութեան մասին տարածուած համբաւով, եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ թունաւորութեան համբաւի տարածման ժամանակ, համքարը տակաւին մի տարերական անզուսպ ոյժ էր և նրա խղճին դիսչող ամեն մի չնչին լուր մեծ շփոթութիւն ու խառվութիւն էր յարուցանում նրա մէջ,—այդ համքարը ոչ թէ ձեռնատուութիւն, այլ ուղղակի բռունցը ցոյց կը տար, եթէ նրա մէջ լինէր մի փոքրիկ կասկած, թէ ներսէս Վ-ը, որին պաշտում էին համքարի մարդիկ, դաւաճանութեան զո՞ն է գնացել: Հակագիրսասականների աչքին փուշ էր, որ Զալալեանը այդքան ժողովրդականութիւն է վայելում: Նրանք փորձեցին մի ուրիշ բամբասանքով շինութեան վրայ աշխատող համքարի մարդկանց միտքը պղտորել և Զալալեանի դէմ գըրդուել, որպէս թէ նա մեռելների ոսկորները գերեզմաններից հանելով թուն է թափում, որ յարութիւն չառնեն: Բայց այս ֆանսն էլ չօգնեց, չխախտեց հասարակ ժողովրդի հաւատը դէպի Սարգիսը: Համքարը մինչև վերջ աշխատեց այն շինութեան վերայ, որ Թիֆլիսի հայութեան պարծանք մնաց:

Ի՞նչպէս վերաբերուեց Զալալեանը Կոմս-էմմանուէլի յիշատակարանի թափանցիկ ակնարկին՝ չգիտեմ: Շատ կարելի է, որ նա մտարերելով առածը, թէ «պտղալի ծառին քար նետող շատ կը լինին» և տեսնելով, որ հասարակ ժողովուրդը իր կողմն է, առանձին վրդովմունք չէ ունեցած: Այս բանը ինձ հաւանական է թուու յիշելով այն իրողութիւնը, որ «Հիւսիսափայլ»-ի այն ամսատետրը, որի մէջ տպուած էր կոմս-էմմանուէլի յիշատակարանը Գիրսասի չարագործութեան մասին, Ներսիսեան դպրոցում ազատ արձակ ձեռքից ձեռք էր անցնում և կարդացում էր. Զալալեանը շատ լաւ գիտէր այս բանը, բայց ոչինչ նախազգուշացուցիչ միջոց չէր գործադրուած, որ աշակերտներին ազատ պահէին այդ յիշատակարանի աղեցութիւնից: Միայնակ բանը, որ Զալալեանն արեց ժողովրդի մտքի գայթակղութեան առաջն առնելու համար՝ այն էր, որ Թիֆլիսից հեռացը Անդրէաս վարդապետին, որ պարապ-սարապ փողոցներում թափառելով, ագէտ ժողովրդի միտքն էր գայթակղեցնում: Այս հանգամանքը հիմք դառաւ մի նոր բամբասանքի, թէ Զալալեանը մատնողութիւններ է անում: Որ այդ բամբասանքը զրպարտութիւն էր՝ ապացոյց համարում եմ այն

փաստը, որ հակագիրսասականներից ոչ մէկը, ինչպէս լաւ յիշում եմ, չտուժեց:

Այսպէս էր Զալալեանի վերաբերմունքը դէպի իր հակառակորդները նա վրդովուեց, և հարկ համարեց պաշտպանուել, երբ տեսաւ որ թունաւորութեան մասին իր հակառակորդների տարածած համբաւը ազգային պատմութեան տպագրուած ձեռնարկի մէջ արձանագրուել է, որպէս ստոյգ իրողութիւն։ Մենք արդէն վերևում յիշեցինք, որ Ստեփան Պերճ Փափազեանի յօրինած ազգային պատմութեան համառու ձեռնարկի մէջ որոշ կերպով ասուած է, թէ ներսէս Վ-ը թունաւորուած է և թէ ով էր չարագործը Զալալեանն իսկոյն այդ ձեռնարկի դէմ բողոքեց կ. Պօլսի պատրիարքին և դատաստան պահանջեց: Ես այժմ չեմ յիշում, թէ ինչպէս վերջացաւ այդ դատաստանը: Բայց իմ խորին համոզմամբ դատարները միաբերան արդարացրած պիտի լինէին Զալալեանին: Այսպիսի համոզման համար հաստատուն հիմք եղած է այն իրողութիւնը, որ Զալալեանը 1868 թուականին կ. Պօլիս գնալով, որպէս հրաւիրակ ս. էջմիածնի կողմից՝ նորընտիր Դէորդ Դ կաթուղիկոսին բերելու, մեծ պատիւ և ընդունելութիւն էր գտել: Փառք Աստուծոյ ժամանակակիցներից տակաւին շատերը կենդանի են և, որպէս ականատեսներ՝ կարող են վկայել, որ իմ ասածս ճշմարտութիւն է: Ես երբէք չեմ կարող ինձ թոյլ տալ ենթադրել, թէ Զալալեանը չարդարացած իր պահանջած դատաստանում, այնքան աներես լինէր, որ իրանց ցոյց տար կ. Պօլսի նման մի քաղաքում, որտեղ՝ դպրատան տղայք դաս էին առել «թէ Զալալեանը թունաւորել է հայրենեաց պաշտպան կաթուղիկոսին: Խելքը զլխին մարդ այդպիսի ենթադրութիւն չի կարող թոյլ տալ»:

Ահաւասիկ այն բոլոր փաստերը, որոնց անաշառ քննութիւնը ինձ բերած են այն հաստատ եղրակացութեան, թէ ներսէս Վ-ի թունաւորութեան մասին տարածուած համբաւը բոլորովին սուտ է: և Զալալեանի վրայ դրուած մեղադրանքը կատարեալ չարախոսութիւն էր կուսակցական հաշիւներ տեսնելու համար: Նորից կրկնում եմ, որ թունաւորութեան մասին տարածուող համբաւը հալած իւղի տեղ եմ ընդունել և դարձել եմ մոլեռանդ հակագիրսասական: Բայց յետոյ, որպէս ուսում առած մարդ, երբ արդէն պարտաւոր էի պատմութիւնը ըննադատութեամբ կարդալ ու սուտն ու դորդը չոկել, դէպքով միտքը ընկնելով այդ իրողութիւնը, ինձ հարկադրեց մտածել այս մասին և հարց տալ, թէ ի՞նչ փաստ ունէին Զալալեանի հաւատութեան:

կառակորդները նրա վրայ այնքան ծանր ամբաստանութիւն բարդելու համար, Ենթարկելով Sine ira studeo հետազօտութեան ժամանակի բոլոր դէպքերը և եղելութիւնները, որոնք բնալորը, իրանց մանրամասնութիւններով յիշողութեանս մէջ խորը տպաւորուած մնացին, և որոնելով դեր ու դէմ փաստեր—ես չգտայ մի փաստ, որ կարողանար գոնէ ամենաթեթև հիմք դառնալ թունաւորութեան կասկածին: Ընդհակառակը, բոլորը, ինչ որ այն ժամանակին անցել է, և ես աչքով տեսել եմ, ինձ համար հաստատ փաստ էր եղարկացնելու, թէ Զալալեանի վրայ ընկած կասկածը ոչ մի հիմք չունէր և թէ նա բոլորովին անմեղ էր: Այդ փաստերի վրայ հիմնուելով, թոյլ տուինք մեղ նկատելու, թէ մեր գրականութեան մէջ լրջամըտութեամբ աշխատադների համար ներսէս Վ-ի մահուան խնդրի մշուշը արդէն բոլորովին փարատուած լինէր:

Ես անկենծօրէն շնորհակալ եմ պ. Ե. Շահազիզից, որ առիթ տուեց ինձ գոնէ իմ կեանքի վերջալոյսին, գրի առնել հանգամանօրէն պատմութիւնը այն համբաւին, որ այնքան տարածուած է մեր ժողովրդի մէջ, և որին, ինչպէս արդէն յիշել եմ, հաւատացել եմ մոլեռանդարար: Այն բոլոր փաստերը, որ առաջ եմ բերել համբաւի սուտ լինելը հաստատելու համար՝ պատմական ստոյգ իրողութիւններ են: Որ այդ փաստերի նշանակութիւնը չեմ աղաւաղած, արուեստաբար լուսաւորելով—կարող եմ վկայ բերել իմ ընկերներին, որոնք տակաւին այսօր էլ ողջ ու առողջ են: Աղէք. Ղաղարեանց, Լ. Թուսիկեանց, Յար. Աբելեանց: Մինչև անգամ մի այնպիսին, որի ատելութիւնը դէպի Զալալեանն այնքան խոր ու անսահման էր, որ երկար տարիներ անցնելուց յետոյ էլ, երբ կը բեր արդէն փարատուած պիտի լինէին, տեսայ, որ Գիրսասի անունը տալիս, աչքը խփում—լեզուն բաց է անում և Մ. Նալբանդեանից անցնելով, սկսում է յիշել Գիրսասի ծննդաբանութիւնը մինչև եօթը պորտը,—իմ պատուական բարեկամ Պերճ Պառշեանցը, վստահ եմ, վկայ կը լինի որ պատմածս ճշմարտութիւն է: Այս ճշմարտութեան վրայ հիմնուած, ես հաւատում եմ, որ ներսէս Վ-ի մահը այնպէս եղած է, ինչպէս նկարագրած է Զալալեանն իր նամակում Խալիպեանին, և այս պատճառով այդ նամակը մի յոյժ կարևոր գրաւոր յիշատակարան եմ համարում Հայրենեաց պաշտպան կաթուղիկոսի կենսագրութեան համար: Dixi.